Հայի խմբագրատան
372
Ռ-12

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ
ՀԱՅՈՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
„ԽՐԻՄԵԱՆ“

ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1912 – 1913 ուսումն. տարւայ համար։

Տպարան Մալխասեանցի Ալէքսանդրապոլ։
1913

372
Բ-19
Ա
370
2298-ՏԵ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.С.Р. Публичная Библиотека
7/II-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

РЕДАКЦІЯ ГАЗЕТЫ
ТИФЛИСЪ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻ

ՀԱՅՈՑ Ս. ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

„ԽՐԻՄԵԱՆ“

ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1912 – 1913 ուսումն. տարւայ համար։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Տպարան Մալխասեանցի Ալէքսանդրապոլ։
1913

17.04.2013

14876-18

1912—1913 ուս. տարեանից Արիմեան դպրոցը բաց արաւ IV բաժանմունք, ու այդպիսով այդ ուսումնական տարում դպրոցն ունեցաւ չորս բաժանմունք I, II, III և IV.

Տարւայ սկզբին դպրոցում կար 176 աշակերտ-աշակերտուհիներ, որոնք տեղաւորուեցին չորս բաժանմունքներում հետևեալ կարգով՝ I բաժ. 60, II բաժ. 61, III բաժ. 36 և IV բաժ. 18 աշակ.։ Աշակերտ-աշակերտուհիների թիւը III և IV բաժանմունքներում հնարաւոր էր և աւելացնել, բայց շինութիւնը արդեզք էր հանդիսանում. պէտք է ասել, որ դպրոցի շէնքը ունէր մի շարք անյարմարութիւններ, որոնց վերացման մասին մտածում էր թէ մանկավարժական խորհուրդը և թէ հոգաբարձական կազմը. և յիշեալ պակասութիւնները միւս ուսումնական տարուանից, երբ շինութեան ժամանակը լրացաւ վերացուել են։ Դպրոցը երկսեռ է և որովհետև սրանով երկրորդ ուսումնական տարին է բոլորւում, որ Արիմեան դպրոցում միասին սովորում են աղջիկ և տղայ, ազատ կարելի է խօսել այս ձևի դպրոցի նպատակայարմարութեան և օգտակարութեան մասին, թէ ընդհանրապէս ամեն տեղ և թէ մասնաւորապէս մեզանում, Ալէքսանդրապոլում։ Ի նկատի ունենալով, որ մեզանում աղջիկը և տղան ստանում են տրամադրօրէն իրար հակառակ սկզբնական կրթութիւն աղջիկը մեծանում է սահմանափակ շրջանում, ընտանիքում, նրա մէջ զարթեցնում են քնքշութիւն, վախկոտութիւն, թուլութիւն, ամօթխածութիւն և միաժամանակ նահայրենիքներից համեմատաբար հեռու է, քան տղան. իսկ տղան ընդհակառակը, մեծանում է ազատ, փողոցի վատ մթնոլորդում, փողոցային հայրենիքների և ան-

կարգութիւնների ազդեցութեան տակ։ Ահա հէնց այդ հանգամանքը նպաստող է հանդիսանում երկսեռ դպրոցում, որտեղ աղջիկը և տղան սովորելով մի յարկի տակ դաստիարակների հսկողութեամբ նոքա իրարուց ազդւում են, տղան իրան զսպում է, կամաց-կամաց մեղմացնում է իր միջի պակասութիւնները, աւելի մարդավայել վերաբերմունք է ցոյց տալիս դէպի իւր հետ սովորող աղջիկը, իսկ աղջիկը տղայից ընդօրինակում է վստահութիւն, ազատութիւն և դառնում է աւելի կամքի տէր։ Ուսումնական տարւայ ընթացքում բոլոր բաժանմունքներում եղել են երկու անգամ ստուգումներ։

Փոխադրութիւնները տարւայ վերջում կատարւել են տարեկան թւանշաններով։

Որոշւած էր, անցեալ տարւայ պէս, թողնել նոյն բաժանմունքներում, I բաժ. ա. հայոց լեզւից և բ. թւաբանութիւնից, II բաժ. ա. հայոց լեզւից, բ. թւաբանութիւնից, գ. ռուսաց լեզւից և կրօնից, և դ. թւաբանութիւնից և կրօնից։

III և IV բաժ. ա. մի գլխաւոր և մի երկրորդական առարկաներից (գլխաւոր առարկաներ հաշւելով հայոց լեզու, ռուսաց լեզու կրօն և թւաբանութիւն) բ. երեք երկրորդական առարկաներից։

Աշակերտ-աշակերտուհիների դասարաններից փոխադրութեան վերաբերեալ տարւայ վերջում կայացաւ հետեւեալ որոշումը. I բաժ. փոխադրւեցին երկրորդը—45 աշակերտ-աշակերտուհիներ, մնացին 7 և դպրոցից դուրս եկած համարւեցին 8, II բաժ. փոխադրւեցին III-ը 44, մնացին 15 և դուրս եկած համարւեցին 2. III բաժ. փոխադրւեցին IV-ը 25, մնացին 10 և դուրս եկած համարւեց 1. IV բաժ, աւարտեցին 13 հետեւեալ աշակերտները. 1) Ըբրամեան Գէորգ (Ալէքսանդրապոլցի), 2) Բոյեախչեան Նիկողայոս (Ալէքսանդրապոլցի), 3) Գրիգորեան

Ղազսի (Ալէքսանդրապոլցի), 4) Եգանեան Յովհաննէս (Ալէքսանդրապոլցի), 5) Զաքէեան Գէորգ (Ալէքսանդրապոլցի), 6) Մալխասեան Գուրգէն (Ալէքսանդրապոլցի), 7) Մուրատեան Կարապետ (Ալէքսանդրապոլցի), 8) Մուրատեան Յարութիւն (Ալէքսանդրապոլցի), 9) Չախուլեան Մելքոն (Ալէքսանդրապոլցի), 10) Ջաղացպանեան Գրիգոր (Ալէքսանդրապոլցի), 11) Մանուկեան Մանուկ (Խլի-Ղարաքիլիսեցի), 12) Տէր-Մկրտչեան Մկրտիչ (Խլի-Ղարաքիլիսեցի, 13) Յարութիւնեան Յարեթ (Օչախ-Ղուլեցի)։

Ըստ իրանց պարապմունքների աշակերտ-աշակերտուհիների ծնողները եթէ բաժանենք երկրագործների, արհեստաւորների, վաճառականների, ծառայողների, հոգեորականների և այլ պարապմունքների, կստանանք հետեւեալ պատկերը՝

1) Երկրագործ	26
2) Արհեստաւոր	56
3) Վաճառական	12
4) Ծառայող	25
5) Հոգեորական	4 և
6) Այլ պարապմունք	53

Իսկ եթէ ըստ կարողութեան բաժանենք, կ'ստանանք՝

1) Լաւ ապրուստ ունեցողներ . . ,	39
2) Բաւարար ապրուստ ունեցողներ . .	63
3) Չքաւոր » » . .	74

Ուսուցչական կազմը բաղկացած էր եօթ հոգուց։ Այդ կազմից աւագ ուսուցիչ Ս. Թարաղեանը աւարտել է ուսուցչական սեմինարիա և ունի քսան և մէկ տարւայ փորձառութիւն։

Տիկին Մարգարիտ Յարութիւնեանը աւարտել է Տըփխիսի III իգական գիմնազիայի ութերորդ դասարանը և ունի չորս տարւայ փորձառութիւն։

Ուսուցիչներ՝ Երանդ Յարութիւնեանը աւարտել է

քաղաքային դպրոց, ունի ուսուցչական ցենզ և տասներ-
եք տարւայ փորձառութիւն։ Եսայի Մելիք-Փարսադա-
նեանը սովորել է ռէալական դպրոցում, ունի ուսուցչա-
կան ցենզ և տասնեսեմ տարւայ փորձառութիւն։ Գէորգ
Բրուտեանը աւարտել է քաղաքային դպրոց, ունի ուսուց-
չական ցենզ և չորս տարւայ փորձառութիւն։

Տիգրան Մանուկեանը աւարտել է ճեմարանը և ունի
երկու տարւայ փորձառութիւն։

Յարութիւն Արարաչեանը աւարտել է քաղաքային
դպրոց, ունի ուսուցչական ցենզ և քսանեսեմ տարւայ
փորձառութիւն։

Դպրոցում աշխատանքները սկսել են սեպտեմբերի
մէկից և վերջացել մայիսի 31-ին։

Ուսուցիչ-ուսուցչուհիները աւանդում էին շաբաթական՝

1) Ս. Թարաղեանը 18 դաս (ռուս. լեզու և ընագրի-
տութիւն),

2) Տ. Մ. Յարութիւնեան 12 դաս (ռուսաց լեզու,
կրօն և թւաբանութիւն),

3) Ե. Յարութիւնեանը 23 դաս (հայոց լեզու, կրօն,
թւաբանութիւն և իրազննութիւն),

4) Տ. Մանուկեանը 20 դաս (հայոց լեզու և երաժըշ-
տութիւն),

5) Ե. Մելիք-Փարսադանեանը 14 դաս (թւաբանու-
թիւն, կրօն և հայրենագիտութիւն),

6) Գ. Բրուտեանը 10 դաս (նկարչութիւն, վայելչա-
գրութիւն և երկրաչափ. ձեագիտութիւն),

7) Յ. Արարաչեանը 4 դաս (թւաբանութիւն)։

Ուսումնական տարւայ ընթացքում դպրոցը այցելել
են և ծանօթացել աշակերտ-աշակերտուհիների յառաջ-
դիմութեան հետ թեմական առաջնորդը և թեմական տե-
սուչը. երկուսն էլ գոհ սրտով են հեռացել, գտնելով, որ
դպրոցը յառաջադիմում է։

Ուսուցիչ-ուսուցչուհիները ի նկատի ունենալով դրպ-
րոցի սուղ միջոցները, ձրիաբար արել են ամբողջ ուսում-
նական տարում վերակացութիւն, կազմակերպել են ման-
կական ներկայացումներ, դպրոցական հանդէսներ և զրօ-
սանքներ։

Դպրոցական պարապմունքների հետ զուգընթացա-
բար ուսումնական տարւայ ընթացքում եղել են ժողով-
ներ մանկավարժական, հոգաբարձական և ծնողական։

Ուսումնական տարում դպրոցը ունեցել է չորս դա-
սարանական հանդէսներ և մի տարեկան ակտ։ Հանդէս-
ներին արտասանել են ոտանաւորներ, դրել են մանկա-
կան պիէսներ, ժողովրդական պարեր և երգել խմբական
երգեր։ Դասարանական տօներին միւս դասարանները
նուիրել են արծաթեայ գրչակոթեր, թանաքամաններ,
իրանց պատանդաններով։

Դպրոցը ունեցել է երեք անգամ դասարանական
ծնողական ժողովներ։ Ծնողական ժողովները անցեալ
տարւայ պէս կապւել էին յառաջադիմութեան վկայական-
ների բաժանման հետ։

Իւրաքանչիւր եռամսեայ թւանշանները դնելուց ան-
միջապէս յետոյ հրաւիրւում էին դասարանական ծնողա-
կան ժողովներ, որտեղ մանկավարժական գրոյցից յետոյ
դաստիարակների միջոցա- բաժանւում էին ծնողներին
իրանց զաւակների յառաջադիմութեան վկայականները։
Ի դէպս պէտք է ասել, որ այս ուսումնական տարում յա-
ռաջադիմութեան վկայականները կցւած էին աշակերտ-
աշակերտուհիների նկատողութեան տետրներին։ Նկատո-
ղութեան տետրները սոյն ուսումնական տարում դպրո-
ցում մտցրւած էր իբրև փորձ։ Բացի յառաջադիմութեան
վկայականներից այս տետրների մէջ կայ աշակերտ-աշա-
կերտուհու հասցէն, ուսուցիչ-ուսուցչուհիների, ծնողների
նկատողութիւնների և բացադրութիւնների համար տեղեր,

նաև սիւնեակները ամսւայ, օրւայ, ուշացման ժամերի, նը-
բանց քանակի համար, ծնողական ժողովի հրաւիրման
համար տպած հրաւիրաթերթեր։ Յիշեալ տետրները մեր
դպրոցների համար հանդիսանում են մի անհրաժեշտու-
թիւն. նոքա տալիս են յարմարութիւն դասատուներին
գոնէ դրաւոր բանակցութեան մէջ մտնել աշակերտ-աշա-
կերտուհիների ծնողների հետ, որով զգալի կերպով պա-
կասում է դպրոցական կեանքից մի շարք յանցանքներ և
բացասական երևոյթներ, ինչպիսիք են՝ ստախօսութիւն,
խաբերայութիւն, անտարբեր վերաբերմունք դէպի դպրո-
ցական պարապմունքները, ծոյլութիւն և այլն, որոնք ա-
ւելի հեշտութեամբ էին տեղի ունենում, երբ սովորող
երեխան գիտէր, որ իր ծնողները և դասատուները իրար
հետ բանակցութեան մէջ չեն, հետևապէս ունէր յարմա-
րութիւն իւր յանցանքը ծածկելու ըստ տեղին, դասա-
տուից կամ ծնողից։ Հոգաբարձական կազմը բաղկացած
էր հինգ հոգուց. նախագահ հոգաբարձութեան Սարգիս
Նախշքարեան, գանձապահ Ալէքսան Ղարախանեան, երեց-
փոխ Մկրտիչ Տէր-Աւագեան և հոգաբարձուներ Լեոն
Մելիք-Սարգսեան և Մկրտիչ Յովհաննիսեան։ Այս ու-
սումնական տարին էլ անցեալ տարւայ պէս ուսուցչական
և հոգաբարձական կազմերը իրար հետ համերաշխ էին
գործում և այդ ձևի գործունէութեանը պէտք է վերագրել
դպրոցական գործի ամբողջ յաջողութիւնը։

1912—1913 ուսումնական տարւայ ընթացքում Խրի-
մեան դպրոցը ունեցել է հետևեալ ելքը՝

1) Ուսուցիչ-ուսուցչուհիներին և դպրոցի ծառաներին 1912 — 1913 ուսումն. տարւայ ը. կ. ռոճիկ ընդամենը	3790———
2) Եկեղեցու շինութեան ներսը նորոգելուն	150———
3) Տպագրութեան, թղթի, գրչի և այլ մանր ծախսերի	40—74

4) Թերթերի	8———
5) Հառիճու 400 ը. պարտքի տոկոսներ .	40———
6) Դպրոցական գործով Էջմիածին, Երևան, Թիֆլիս, Փոխ-Թեմական մօտ գնալիս ճանապարհածախս, հանգստանակութեան ժամանակ կառքի և այլն	66—90
7) Դպրոցի շինութեան, աւագ ուսուցչի և ծառայի բնակարանների վարձ . . .	468———
8) Նոր շինութեան վարձով տրելու պայմանի և ներսի նորոգումն	66—32
9) Փոստի ծախս	5—99
10) Վառելիքի և լուսաւորութեան . .	89—10
11) Դպրոցի և վարձով տրւած շինութիւնների ու դպրոցական կահկարասիքի կարկատելուն, ներկելուն, պատերի սպիտակացնելուն և նման ծախքեր	66—41
12) Դպրոցական երկու շինութիւնների ապակիներ քցելուն	9—15
13) Ուսումնարանի համար դպրոցական իրեր և ուսուցչանոցի համար աթոռներ, լամպա և այլն	67—53
14) Կաւիճ, մեխ, թել, աւել, թեփ և զանազան մանր ծախսեր	11—87
Ընդամենը 1912—1913 ուսումն. տարւայ ընթացքում, համաձայն նախահաշվի, դպրոցի վրայ ծախսել է . . . . . ,	4880 ը.—

Ելքը ծածկւած է հետևեալ եկամտային աղբիւրներով՝

1) Դպրոցի շինութեան վարձ . .	1500 ը.—
2) Աշակերտ-աշակերտուհիների թոշակներից	851———
3) 1911 — 1912 ուսումն. տարւոց կասայում մնացածը	151—81
4) Ս. Աստուածածնի պատկերի ներքին և	

արտաքին արդիւնքներից . . . . 1894—19

5) Նէրքներ և պատուաւոր հոգաբարձութեան անդամավճարներ . , . . 483——

Ընդամենը . . . . . 4880——

Հինգերորդ համարով ցոյց տուած 483 ր. ժողոված է հետեւեալ բարերար անձնաւորութիւններից և հիմնարկութիւններից՝

Պատուաւոր հոգաբարձութեան 1912-1913 ուսումն. տարեվճարներ՝ պ. պ. Բ. Դրամբեանը 50 ր., Ե. Սէյլանեանը 25 ր., Եղբ. Յակովբեանները 20 ր., Հ. Տէր-Ղազարեանը 25 ր., Գեղամ Տէր-Պետրոսեանը 25 ր., Տիկին Ե. Մարուքեանը 15 ր., Մ. Ծատուրեանը և Ս. Աբոյեանը 10-ական ր., 5-ական ր. վճարել են՝ պ. պ. Գ. Ադաբաբեանը, Հ. Մատեսի-Պողոսեանը, Գ. Վարդիկեանը, Եղբ. Մ. և Վ. Երանոսեանները, Գ. Մատոյեանը, Մ. Կանեցեանը, Ա. Ճինանեանը, Յ. Քեանդարեանը, Ա. Մալխասեանը, Պ. Գեօնչեանը, Խ. Դալալեանը. Գ. Սեւոյեանը, Ասատ. Գառգալոյեանը, Մ. Գառգալոյեանը, Յովհ. Սանոյեանը, Մ. Խզմալեանը, Յովհ. Տէր-Մինասեանը, Կ. Ջանլաթեանը, Եղբ. Շէկոյեանները, Ս. Բայբուրտցեանը, Հ. Ժամակոչեանը, Առաքել Իսահակեանը և Ն. Կիրակոսեանը։ Ստացել է տեղիս Փոխատու-Խնայողական վարկից ի յիշատակ նրա հիմնադիր հանգուցեալ Յովհաննէս Տէր-Մարտիրոսեանի 50 ր.։ Բացի դրանից միանւագ նուիրել են պ.պ. Արամ Յակովբեանը ի յիշատակ իւր հանգուցեալ հօրեղբօր 25 ր., Յովհ. Օձնեցեանը ի յիշատակ իւր կնոջ 15 ր., Կոստանեանները – ի յիշատակ իրենց հօր; հանգուցեալ Զուրաբ Կոստանեանի 15 ր. և Ծննդեան երեկոյեան աւետիս ման գալով ժողոված պատուաւոր քաղաքացիներից 60 ր.։ Վճարել են 3-ական ռուբլի պ. պ. Գ. Խաժակնեանը և Ա. Տէր-Աւագեանը և 2 ր. Խոյեցեանը։

Պատուաւոր հոգաբարձուներ պ. Բ. Դրամբեանի 50 ր. թոշակից ազատւում են 5 աշակերտներ, իսկ տիկին Ե. Մարուքեանի 15 ր. մէկ աշակերտուհի։ Բացի յիշեալ բարերարներից դպրոցումս որդեգիրներ պահում են պ.պ. Ռշոտ Կարանեանը—2 աշակերտ. տալիս է շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 16 ր., Տնկոզեանը — 1 աշակերտ. տալիս է շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 8 ր., Եղբ. Ամիրջանեանները – 2 աշակերտ. տալիս են շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 16 ր., Յ. Կարանեանը — 1 աշակերտ. տալիս է շորեր, ուսման պիտոյքներ և թոշակ 10 ռուբլի։

Խրիմեան դպրոցի հոգաբարձութիւնը աւագ ուսուցիչ Ս. Թարաղեանի հետ միասին, ի նկատի ունենալով Ս. Լուսաւորիչ եկեղեցու շինութեան ներսի և դրսի խախուտ դրութիւնը, ուսումնական տարւայ ընթացքում դպրոցի տնտեսականի հոգացողութեան հետ դուգընթացաբար աշխատեցին և միջոցներ գտնելով վերանորոգեցին թէ եկեղեցու շինութեան ներսը և թէ դուրսը։ Եկեղեցու և դպրոցի նոր շինութեան շրջապատի մի մասը շինեցին։ Յիշեալ գործում զգալի աջակցութիւն և օգնութիւն ցոյց տուին հոգաբարձութեանը եկեղեցու երեք միաբան քահանաները և ծխականներ պ. պ. Նիկողայոս Կիրակոսեան (քննիչի թարգման), Արշակ Բոյեախչեան, Բարսեղ Մալխասեան, Լեոն Գեօտակեան, Մնացական Թամրազեան և Միքայէլ Բոյեախչեան, որոնք հոգաբարձուների և աւագ ուսուցչի հետ շրջեցին ծխականների մի մասի տները, փող ժողովեցին և այդ բարի գործի եթէ ոչ լրիւ վերջանալուն, գոնէ սկսելուն և կէսից աւելին շինելուն պատճառ դարձան։ Թէ հոգաբարձութիւնը, թէ ուսուցչական կազմը և թէ բոլոր գիտակից ծխականները լիայոյս են, որ կշարունակի հանգանակութեան գործը և թէ եկեղեցու ներսը ու դուրսը, թէ նրա և ուսումնարանի շինութեան ամ-

բողջ շրջապատը կարգի կբերուի։ Շինած գործը ինքը բաջալերող կհանդիսանայ շահագրգռուած ու բանիմաց անձանց համար։

Եկեղեցու վերաբերեալ ծախսերի մանրամասութիւնները՝ նորոգուած է խաչկալը, նկարուած են Քրիստոսի, առաքեալների, Ս. Լուսաւորչի և Աստուածածնի պատկերները. վերջինս նուիրեց եկեղեցուն Մկրտիչ Տէր-Աւագեանը։ Եկեղեցու ներսի բոլոր պատերը սպիտակացրած է, սիւները և բոլոր փայտեղէնը ներկած է, շինուած է մի փայտէ սանդուխք, զանձանակատիպեր։ Եկեղեցու չորս կողմը մաքրած է, դրսի պատերը մաքրած է, ծառների սենեակի ներսը և դուրսը սվաղած է, եկեղեցու ներսի իրերը և անօթները մաքրած է, լուսամուտներին ապակիներ է քցած, եկեղեցու բակում գտնուած հողերը մաքրել է, հարաւային դռան մօտ աստիճաններ է շինել, շրջապատը շինել է, սալայատակի մի մասը շինուած է, իսկ միւս մասը, նաև մնացած պատերի և աստիճանների համար քարը բերած է և պատրաստ է աւաղը։ Այդ բոլորի համար ծախսուած է 851 ր. 14 կ., որպիսի գումարը լրացուել է հետեւեալ կերպով՝ 1) Սարգիս Մանուկեանից իւր բրոջ յիշատակին նուիրած — 3 ր., 2) Վարագոյրների բացման ժամանակ Գրիգոր Վարդանեանից — 3 ր., Յակովբ Բոյեախչեանից 2 ր. և օր. Տէր-Դաւթեանից 2 ր., 3) Տէր-Աւագեան եղբայրներից իրանց բրոջ յիշատակին — 14 ր., 4) եկեղեցու պատկերների օծման քաւորներից — 42 ր. 50 կ. որը ստացուել է՝ 3-ական ռուբլի Ըշաւիր Թարաղեանից, Հայկ Տէր-Աւագեանից, Աղասի Մխիթարեանից, Հերիքնազ Շախմախչեանից, Մուշեղ Քինակցեանից, Յովհաննէս Գառգալոյեանից, Մկրտիչ Գառգալոյեանից, Սուրէն Արարաչեանից, Ստեփան Տէր-Աւագեանից, Հմայեակ Տիրատուրեանից, Աւետիք Բոյեախչեանից, Հայկ Սելիք-Փարսաղանեանից և Յովհ. Քինակցեանից, 2 ր. Երանդ

Տիրատուրեանից և մի ոսկի (1 ր. 50 կ.) Երեսհատ Շահինեանից, 5) Եղբ. Վարդապարիկեաններից ի յիշատակ իրանց հօր շինուած խաչկալի նորոգման 30 ր., 6) Խրիմեան դպրոցից նպաստ 150 ր., 7) Ծխականներից հանգանակած — 214 ր. 84 կ., 8) Ղարաբեշիշեան ժառանգներից իրանց հօր յիշատակին — 15 ր., ընդամենը 461 ր. 34 կ.։ Բայց մնացած գումարը վերցրած է փոխարինաբար և ծախսուած է, որը պէտք է վճարուի ապագայում այդ նպատակով արած հանգանակութիւնից, իսկ հանգանակութիւնը պէտք է շարունակել, որպէս զի, թէ այդ բացը լրացուի և թէ եկեղեցու դրսի հայեաթի վերաբերեալ բոլոր նորոգութիւնները աւարտուի։

Մուտքի մէջ ցոյց տուած հանգանակութեան 214 ր. 84 կ. վճարել են հետեւեալ անձինք.

Հայը Սահակի ծխերից.

5 ր. նուիրել է Երանդ Մալխասեանը, 3-ական ռուբ. նուիրել են Ղեոնդ քահ. Պետրոսեանը. Յակովբ քահ. Ամատունին, Միխակ Սանոյեանը, Սահակ քահ. Դարբինեանը, 2-ական ռ. նուիրել են՝ Յարութիւն Քինակցեանը, Մկրտիչ Շահինեանը, Յակովբ Մանուկեանը, Յակով Իգիտեանը, Յարութիւն Զոփուռեանը, 1 ր. 50 կ. նուիրել է Պետրոս Անտիկեանը, 1-ական ռ. նուիրել են՝ Լեոն Բղոյեանը, Հմայեակ Եկանեանը, Կարապետ, Ռաբելեանը, Կարապետ Սանոյեանը, Դաւիթ Եղիկեանը, Եղասի Վրիկրեանը, Կարապետ Մխիթարեանը, Գրիգոր Տէր-Մինասեանը, Սեդրակ Զոփուռեանը, Համբարձում Իսպիրեանը, Գաբրիել Իսպիրեանը, Գրիգոր Պապոյեանը, Յակովբ Մեքինեանը, Մնացական Զիլարեանը, Պետրոս Մուրատեանը, Տիգրան Մարտոյեանը, Մկրտիչ Ալիսանեանը, Մնացական Թարդեանը, Եղիշէ Եբաբաշեանը, Մարտիրոս Շահինեանը, Գաբրիել Զայիմցեանը, Համբարձում Թար-

գեանը։ 50-ական կոպ. նուիրել են՝ Սիմէօն Եղանեանը, Կարապետ Համասեանը, Մելիք Մկրտչեանը, Աւետիք Ղուկասեանը, Սրգար Փոնչեանը, Պետրոս Մխիթարեանը, Նիկոլ Մխիթարեանը, Կարապետ Սիմէօնեանը, Սարգիս և Գէորգ Շահինեանները, Գրիգոր Վարդեանեանը, Մկրտիչ Ղուկասեանը, Յովհաննէս Մխիթարեանը, Ռուբէն Մանուկեանը, Գրիգոր Շահրազեանը, Մկրտիչ Մարդոյեանը, Սարգիս Մարդոյեանը, Մկրտիչ Պողոսյեանը, Խաչատուր Առաքելեանը, Պետրոս Տիրատուրեանը, Ալէքսան Զոփուռեանը, Ստեփան Կաժոյեանը, Գրիգոր Ալէքսանեանը։ 40-ական կոպ. նուիրել են՝ Թադէոս Փոնչեանը և Վարդան Զահինեանը, 25 կ. նուիրել է Մկրտիչ Ալէքսանեանը և 20 կ.—Յարութիւն Մելքոնեանը։ Ընդամենը 63 ռուբ. 75 կոպ.։

Հայր Ղևոնդի ծխերից.

25 ռ. նուիրել է Գալուստ Մատոյեանը. 5-ական ռ.—Լևոն Գեոտակեանը և Վարոս Զահինեանը. 3-ական ռ. — Արսէն Գեոտակեանը, Կարապետ Հայրապետեանը, Հմայեակ Եղիկեանը, Ալէք Մատոյեանը. 2-ական ռ.—Հմայեակ Գեոտակեանը, Սիմէօն Մեհրեանը, Սեդրակ Ջանոյեանը, Ենովք Տէր-Աւագեանը, Սեդրակ Թութխալեանը, Կարապետ Ժամակոչեանը, Յովհաննէս Տէր-Աւագեանը, Սարգիս Բոյեաճեանը, Համբո Բարսեղեանը, Մնացական Թամրազեանը. 1 ռ 50 կ. նուիրել են՝ Գրիշ Շամամեանը, Լևոն Կաղզանցեանը, Գրիշ Դիլանեանը. 1-ական ռ. —Մարգար Գէորգեանը, Ալէքսան Բաղդասարեանը, Ալէքսան Զահինեանը, Մնացական Գեոտակեանը, Թադէոս Գեոտակեանը, Խաչատուր Դիլանեանը, Վասիլ Մատոյեանը, Կարապետ Յարութիւնեանը, Արշակ սապոկչի, Աւետիք Թութխալեանը, Գեղամ Մուրատեանը, Միքայէլ Բարսեղեանը, Յովհաննէս Բարսեղեանը, Տեփան Մու-

սիկեանը, Գալուստ Գէորգեանը, Սողոմոն Պետրոսեանը։ 70 կ. նուիրել է Աղաբէկ Գեոտակեանը. 80 կ. — Սարգիս Դիլանեանը. 85 կ.—Բաբան Երկայն-Ակոյեանը. 50-ական կոպ.—Մանուկ Տէր-Աւագեանը, Մարտիրոս Աթոյեանը, Սենոյ Տէր-Դաւթեանը, Յարութիւն Բաղրամեանը, Բարսեղ Գրիգորեանը, Երանդ Գեոտակեանը, Յարութիւն Դիլանեանը, Արտաշէս Եաղջեանը, Կարօ Բարսեղեանը. 40-ական կոպ.—Թադէոս Տէր-Առաքելեանը, Հմայեակ Մաթոսեանը, Յարութիւն Մանտեսի Ստեփանեանը. 30 կոպ. նուիրել է Միքայէլ Անդրիասեանը. 20-ական կոպ.—Մացակ Աթոյեանը, Աբրահամ Կիրակոսեանը, Մովսէս Խանջեանը. 15 կոպ. նուիրել է Արսէն Թոռճեանը։ Ընդամենը 97 ռուբ. 60 կոպ.

Հայր Յակովբի ծխերից.

5-ական ռ. նուիրել են՝ Միսակ Ծատուրեանը, Մկրտիչ Գառգալոյեանը, Վարդան Գեոլեցեանը, 3-ական ռ.—Ուրուշան Զաքէեանը, Յակովբ Խաչատրեանը, Կարապետ Տիրատուրեանը. 2-ական ռ. — Մարգար Տիրատուրեանը, Վաղարշակ Սարգսեանը, Աստ. Գառգալոյեանը. 1-ական ռ.—Նիկող. Գեոլեցեանը, Երե. Գործակալեանը, Պ. Յարոյեանը, Արշակ Աստուածատրեանը, Միք. Տէր-Առաքելեանը, Գրիգոր Տէր-Ստեփանեանը, Տիգ. Մաղմանեանը, Են. Մկրտչեանը, Սարգիս Տիրատուրեանը, Բալաբէկ Գեոտակեանը, Սրապ. Մելիքսեղեկեանը, Գրիգոր Սիմէօնեանը, Ղևոնդ Գրիգորեանը. 60-ական կ.—Արտաշէս Գեոլեցեանը, Ստ. Տէր-Ստեփանեանը. 50-ական կ.—Յովհ. Սիմաւոնեանը, Արտաշէս Աթոյեանը, Ալէքսան Զաքէեանը, Տիգրան Ծատուրեանը, Մկրտիչ Մալխասեանը, Մանուկ Տէր-Աւագեանը, Կիրակոս Քոչարեանը, Գրիգոր Եշիլբաշեանը, Միքայէլ Մատոյեանը, Մանուկ Ալոյեանը, Բաղդասար Տէր-Մելքիսեղեկեանը, Սրմենակ Վիրաբեանը,

Տիգրան Թարզեանը, Տիգրան Մարտիրոսեանը, Արամ Կարապետեանը, Կարապետ Յարութիւնեանը, Կարապետ Այվազեանը. 30 կ. նուիրել է Մ. Թարզեանը, 29 կոպ.— Գրիգոր Մարտիրոսեանը և 20 կ.— Յովհաննէս Մինասեանը։ Ընդամենը 53 ր. 49 կ.։ Յարութ Վիրաբեանը բերել է երեք սայլ քար։

Թէ Խրիմեան դպրոցը և թէ Լուսաւորչի եկեղեցին գտնելով Ալէքսանդրապոլ քաղաքի ամենաչքաւոր դասի իրաւասութեան տակ, միշտ էլ կարօտ պէտք է լինեն դրսի օգնութեան, հետևապէս քաղաքի բանիմաց և առատաձեռն անձնաւորութիւնների ուշադրութիւնն ենք հրաւիրում այս երկու ամենակարևոր հիմնարկութիւնների վրայ՝ եկեղեցու և դպրոցի։ Վերոյիշեալ եկեղեցին և դպրոցը ի նկատի ունենալով անցեալում ստացած լիառատ օգնութիւնը, ազատ կարող են յուսալ, որ նրանց յարատևութեան համար միշտ էլ կլինին անկեղծ մտածողներ։ Միայն չպէտք է մոռանալ ներկայումս ադաղակող ու անհրաժեշտ ծախսերը՝ եկեղեցու հայեաթին քիչ թէ շատ վայելուչ ձև տալու համար և ով կարող է թող նիւթական աջակցութիւն ցոյց տայ Ս. Լուսաւորիչ եկեղեցու ծախսերը հոգացող հանդանակիչ մասնաժողովին և դիւրութիւն տայ նրան աւարտելու յիշեալ գործը։

Կազմեց աւագ-ուսուցիչ՝

Ս. ԹԱԲԱՂԵԱՆ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԻՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0229743

50. 321

254